ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱ-ՄԱԱՊՁԲ-18/19

ք. Երևան «16» ապրիլի 2018թ.

ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն ի դեմս աշխատակազմի ղեկավար Գագիկ Մանոյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ.Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են տասնհինգ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են տասնհինգ օրից ավելի,

2.1.8 Ձևել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 371 560 /երեք հարյուր յոթանասունմեկ հազար հինգ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[1]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:[2]

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[2] *Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:*

սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման ՊԿ	«Սմարթլայն» ՍՊԸ
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4	ք. Երևան, Վարդանանց 110,
ՀՀ ՖՆ գործառ. Վարչ.	Հ/Հ 16300-7031509,
ՀՀ 900011040020	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,
ՀՎՀՀ 02705793	ՀՎՀՀ 01548908,
Ագենտությունի ղեկավար	Հեռ.՝ 010-55-84-83
Գ.Մանոյան	E-mail: ssmartline@mail.ru
	Տնօրեն՝ Տ.Դաբիրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«16» ապրիլի 2018թ. կնքված
ՄՄ-ՄԱԱՊՁԲ-18/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագումը և երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափումը և միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	22811150/1	Նոթատետրեր, Sinarline	ՉԺՀ	Նոթատետր գրասենյակային մինչև 100 էջ, A 5 չափի	հատ	250	5000	20	ՔՁԵրևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ մինչև 28.09.2018
										10	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
2	22811150/1	Նոթատետրեր, Sinarline	ՉԺՀ	Նոթատետր գրասենյակային մինչև 100 էջ, A 4 չափի	հատ	500	10000	20	ՔՁԵրևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										5	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										15	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
3	30192100/1	ռետին հասարակ, Oxford	ՉԺՀ	Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	Հատ	90	1800	20	ՔՁԵրևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										10	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
4	30192111/1	թանաքի բարձիկներ, Horse	ՉԺՀ	Բարձիկ կնիքի համար, 8.5 x 12.5 սմ, կապույտ	Հատ	400	800	2	ՔՁԵրևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	2	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										-	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										-	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
5	30192114/1	թանաք, կնիքի բարձիկի համար, Horse	ՉԺՀ	Թանաք կնիքի բարձիկի համար, կապույտ:	Հատ	200	400	2	ՔՁԵրևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	2	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										-	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										-	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
6	30192121/1	գրիչ գնդիկավոր,	ՀՆԳ	Գնդիկավոր, կապույտ գույնի, տարբեր	Հատ	100	7000	70	ՔՁԵրևան,	20	II եռամսյակ- մինչև 29.06.2018

		Cello		տեսակի կառուցվածքով:					Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	20	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										30	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
7	30192130/1	Մատիտներ Skyglory	ՀԺՀ	Հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ /HB/:	Հատ	50	2500	50	Ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										20	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										30	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
8	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյակային, Glue stick	ՀԺՀ	Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար, 8 գ:	հատ	150	3000	20	Ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										10	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
9	30192720/1	Գծանշիչ, Skyglory	ՀԺՀ	Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով:	հատ	150	1500	10	Ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										5	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										5	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
10	30192720/2	Գծանշիչ, Flamingo	ՀԺՀ	Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, գրատախտակի:	հատ	200	2000	10	Ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										-	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
11	30192760/1	սրիչ, սովորական, Sharpener	ՀԺՀ	Սրիչ գրաֆիտե մատիտի համար	հատ	100	400	4	Ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										4	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										-	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
12	30192780/1	Էջաբաժանիչ, Divider	ՀԺՀ	Էջաբաժանիչ՝ կպչուն, գունավոր:	հատ	400	8000	20	Ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										10	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
13	30192930/1	ուղղիչ գրիչներ, Pointer	ՀԺՀ	Ուղղիչ գրիչներ տպագրված տեքստը մաքրելու համար ջրային հիմքով, մինչև մինուս 20 °C չսառչող կամ այլ օրգանական լուծիչի հիմքով, 7 մլ տարողությամբ գրիչներ	հատ	200	4000	20	Ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										10	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
14	30197111/1	կարիչի մետաղալարե կապեր, փոքր, DL	ՀԺՀ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ:	տուփ	80	1600	20	Ք.Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										10	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.

15	30197112/1	կարիչի մետաղալարե կապեր. միջին. Kangaro	ՉԺՀ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ :	տուփ	120	2400	20	ՔՀԵրևան. Տիգրան Մեծի 4. 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										10	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
16	30197230/1	Թղթապանակ, Pop	ՉԺՀ	Արագակար պլաստիկ, մետաղական ամրակով, A4 ձևաչափի թղթերի համար	հատ	300	15000	50	ՔՀԵրևան. Տիգրան Մեծի 4. 5-րդ հարկ	10	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										30	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
17	30197230/2	Թղթապանակ. Folder	ՉԺՀ	թղթապանակ պլաստիկ, գունավոր, տուփ առանց կարելու հարմարանքի, ամրացվում է ռետինե կապերով, լայնություն 8սմ	հատ	800	8000	10	ՔՀԵրևան. Տիգրան Մեծի 4. 5-րդ հարկ	10	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										-	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										-	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
18	30197231/1	թղթապանակ. պոլիմերային թաղանթ, ֆայլ. impulse	Իմպուլ ս-Ա, ՀՀ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամբ:	հատ	10	15000	1500	ՔՀԵրևան. Տիգրան Մեծի 4. 5-րդ հարկ	400	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										500	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										600	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
19	30197232/1	թղթապանակ. արագակար	ՀՀ	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար:	հատ	60	3000	50	ՔՀԵրևան. Տիգրան Մեծի 4. 5-րդ հարկ	10	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										30	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
20	30197233/1	թղթապանակ. թելով, թղթյա	ՀՀ	Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3 , հաստությունը 0,3-ից մինչև 1.5 մմ:	հատ	70	1190	17	ՔՀԵրևան. Տիգրան Մեծի 4. 5-րդ հարկ	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										17	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										-	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
21	30197234/1	թղթապանակ. կոշտ կազմով. ALBA-RADO	ՉԺՀ	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, 80 մմ լայնությամբ:	հատ	750	15000	20	ՔՀԵրևան. Տիգրան Մեծի 4. 5-րդ հարկ	10	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										-	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
22	30197622/2	թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/, Pioneer	Նավիգա տոր Կոմփան ի, Պորտուգ ալի	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ:	կգ	780	243750	312,5	ՔՀԵրևան. Տիգրան Մեծի 4. 5-րդ հարկ	50	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										125	III եռամսյակ- մինչև 28.09.2018
										137,5	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
23	30199420/2	թուղթ նշումների համար Jia Te	ՉԺՀ	Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, տարբեր չափերի, տրցակներով	հատ	150	7500	50	ՔՀԵրևան. Տիգրան Մեծի 4.	-	II եռամսյակ- մինչև 29.06.2018
										20	III եռամսյակ- մինչև 28.09.2018

									5-րդ հարկ	30	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
24	39263200/1	գրասենյակային գիրք, մատյան, տողանի, սպիտակ էջերով, Meanuscript	ՁԺՀ	Կապույտ գույնի, հատ և ամուր կազմով գրասենյակային գիրք, մատյան, 70էջ, տողանի, սպիտակ էջերով	հատ	1600	8000	5	ՔՁ Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ մինչև 29.06.2018
										2	III եռամսյակ-մինչև 28.09.2018
										3	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
25	39263410/1	ամրակ, մետաղյա, փոքր, DL	ՁԺՀ	Փոքր, գրասենյակային ամրակներ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ:	տուփ	120	2400	20	ՔՁ Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ-մինչև 29.06.2018
										10	III եռամսյակ-մինչև 28.09.2018
										10	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
26	39263520/1	սեղմակ, միջին, DL	ՁԺՀ	Մետաղական, լայնությունը 32 մմ	հատ	22	880	40	ՔՁ Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ-մինչև 29.06.2018
										-	III եռամսյակ-մինչև 28.09.2018
										40	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.
27	39263530/1	սեղմակ, մեծ, DL	ՁԺՀ	Մետաղական, լայնությունը 51 մմ	հատ	60	1440	24	ՔՁ Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ	-	II եռամսյակ-մինչև 29.06.2018
										-	III եռամսյակ-մինչև 28.09.2018
										24	IV եռամսյակ մինչև 15.12.2018թ.

**Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ
ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության
կարգավորման ՊԿ
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ գործառ. Վարչ.
ՀՀ 900011040020
ՀՎՀՀ 02795793
Աշխատակազմի ղեկավար
Գ.Մանասյան

/ստորագրություն/
Գ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ

ք. Երևան, Վարդանանց 110,
Հ/Հ 16300-7031509,
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,
ՀՎՀՀ 01548908,
Հեռ.՝ 010-55-84-83
E-mail: ssmartline@mail.ru
Տնօրեն՝ Տ.Զաքիբյան

/ստորագրություն/
Գ.Տ.

Հավելված N 2
«16» ապրիլի 2018թ. կնքված
ՄՄ-ՄԱԱՊՁՐ-18/19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22811150/1	նոթատետրեր	-	-	-	-	-	-	2500	2500	2500	5000	5000	5000	5000
2	22811150/2	նոթատետրեր	-	-	-	-	-	-	2500	2500	2500	10000	10000	10000	10000
3	30192100/1	ռետին հասարակ	-	-	-	-	-	-	900	900	900	1800	1800	1800	1800
4	30192111/1	թանաքի բարձիկներ	-	-	-	-	800	800	800	800	800	800	800	800	800
5	30192114/1	թանաք, կնիքի բարձիկի համար	-	-	-	-	400	400	400	400	400	400	400	400	400
6	30192121/1	գրիչ գելիկավոր	-	-	-	-	2000	2000	4000	4000	4000	7000	7000	7000	7000
7	30192130/1	մատիտներ	-	-	-	-	-	-	1000	1000	1000	2500	2500	2500	2500
8	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյակային	-	-	-	-	-	-	1500	1500	1500	3000	3000	3000	3000
9	30192720/1	գծանշիչ	-	-	-	-	-	-	750	750	750	1500	1500	1500	1500
10	30192720/2	գծանշիչ	-	-	-	-	-	-	2000	2000	2000	2000	2000	2000	2000
11	30192760/1	սրիչ, սովորական	-	-	-	-	-	-	400	400	400	400	400	400	400
12	30192780/1	էջաբաժանիչ	-	-	-	-	-	-	4000	4000	4000	8000	8000	8000	8000
13	30192930/1	ուղղիչ գրիչներ	-	-	-	-	-	-	2000	2000	2000	4000	4000	4000	4000
14	30197111/1	կարիչի մետաղալարե կապեր, փոքր	-	-	-	-	-	-	800	800	800	1600	1600	1600	1600
15	30197112/1	կարիչի մետաղալարե կապեր, միջին 24	-	-	-	-	-	-	1200	1200	1200	2400	2400	2400	2400

16	30197230/1	թղթապանակ	-	-	-	-	3000	3000	6000	6000	6000	15000	15000	15000	15000
17	30197230/2	թղթապանակ	-	-	-	-	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
18	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	-	-	-	-	4000	4000	9000	9000	9000	15000	15000	15000	15000
19	30197232/1	թղթապանակ, արագակար ստվարաթղթից	-	-	-	-	600	600	1200	1200	1200	3000	3000	3000	3000
20	30197233/1	թղթապանակ, թելով, թղթյա	-	-	-	-	-	-	1190	1190	1190	1190	1190	1190	1190
21	30197234/1	թղթապանակ, կոշտ կազմով	-	-	-	-	7500	7500	15000	15000	15000	15000	15000	15000	15000
22	30197622/2	թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/	-	-	-	-	39000	39000	136500	136500	136500	243750	243750	243750	243750
23	30199420/2	թուղթ նշումների համար	-	-	-	-	-	-	3000	3000	3000	7500	7500	7500	7500
24	39263200/1	գրասենյակային գիրք, մատյան,	-	-	-	-	-	-	3200	3200	3200	8000	8000	8000	8000
25	39263410/1	ամրակ, մետաղյա, փոքր	-	-	-	-	-	-	1200	1200	1200	2400	2400	2400	2400
26	39263520/1	սեղմակ, միջին	-	-	-	-	-	-	-	-	-	880	880	880	880
27	39263530/1	սեղմակ, մեծ	-	-	-	-	-	-	-	-	-	1440	1440	1440	1440

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության
կարգավորման ՊԿ
Հասցե ք.Երևան Տիգրան Մեծի 4
ՀՀ ՖՆ գործառ. Վարչ.
ՀՀ 900011040020
ՀՎՀՀ 02705793
Աշխատակազմի ղեկավար
/Գ.Մանոյան/
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110,
Հ/Հ 16300-7031509,
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,
ՀՎՀՀ 01548908,
Հեռ.՝ 010-55-84-83
E-mail: smartline@mail.ru
Տնօրեն Ա.Ս. Դարիրյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«16» ապրիլի 2018թ. կնքված
ՄՍ-ՄՍԱՊՁՐ-18/19 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«16» ապրիլի 2018թ. կնքված
ՄԱ-ՄԱԱՊՁԲ-18/19 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի առդրունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն